

**ՌՈՒԲԵՆ ՀԵՐՅԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ
ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ
Հովհաննիսյան Հ. Ա.**

Հոդվածում ներկայացվում է Ռուբեն Հերյանի անձնուրաց նվիրումը իր աշխատանքին՝ հայ որբերին, կանաց և աղջիկներին Հայոց ցեղասպանության տարիներին որոնելու, գտնելու և որբանոցներում տեղակայելու մասին, ինչպես նաև Հերյանի համագործակցությունը Հայ ազգային միության, Միջազգետքի Հայ օգնության կոմիտեի և այլ բարեգործական միությունների հետ: Կարևորվում է Հերյանի մտերմիկ կապը Հայկական լեգեոնի լեգեոնականների հետ՝ Ջիմ Չանկայան, Ջորջ Թագազդյան և այլք, որովհետև Ռուբեն Հերյանը նույնպես անդամակցել է Հայկական լեգեոնին որպես կապրալ:

Բանալի բառեր. Ռուբեն Հերյան, Հայոց ցեղասպանություն, Հայ ազգային միություն, Միջազգետքի Հայ օգնության կոմիտե, Մերձավորարևելյան նպաստամատույց, որբահավաք աշխատանք, որբանոցներ:

Նախաբան: Ռուբեն Հերյանը ամենահակասական կերպարներից մեկն է, որը մեծ ներդրում ունի Սիրիական անապատներում որբերի փրկության գործում: Նրա գործունեությանը և կերպարին անդրադարձել են Ն. Մարգարյանը (Միջազգետքի անապատների հայ որբախույզները (1918-1923), ԵՊՀ Հայագիտության հարցեր, 1 (13), Եր., ԵՊՀ հրատ., 2018) [1] և Ա. Ալեքսանյանը (Aleksanyan A., Rescuing Armenian Women and Children after the Genocide: The Story of Ruben Heryan) [2] նշված հոդվածներում: Սակայն Հերյանի ֆոնդի լիարժեք ուսումնասիրություն մինչ օրս չի կատարվել: ՀՀ Ազգային արխիվում պահպանվել են ուշագրավ բովանդակությամբ նամակներ, որոնք վկայում են Հերյանի և

Հայ ազգային միության միջև ամուր կապերի մասին: Հայ ազգային միության նպատակն է եղել օգնել Հերյանին ոչ միայն նյութապես, այլև տեղեկատվական տվյալներով: Հայ ազգային միության Հալեպի վարչության ուղարկած նամակներից պարզ է դառնում, որ անդամները նաև հետևել են աշխարհասփյուռ հայության պարբերական մամուլում հրատարակվող հայտարարություններին և ընտրելով տարածաշրջանում փնտրվողների մասին հայտարարությունները՝ ուղարկել Հերյանին՝ այսպիսով թեթևացնելով նրա որոնողական աշխատանքները: Նշենք Նյու Յորքում հրատարակված «Կոչնակ» շաբաթաթերթը և «Ճակատամարտ» օրաթերթը: Երբեմն մեկ նամակում միությունը հանձնարարում էր փրկել մի քանի ընտանիքների ներկայացուցիչների:

Հայոց տարագիրների պաշտպան Ադանայի ազգային միության 10 մայիս 1919թ. թվակիր նամակում նշվում էր, որ «Ճակատամարտ» օրաթերթի 148-րդ համարում հրատարակված է եղել Հերյանի մասին մի հոդված, որում պատմվում էր, որ նա պաշտոն է ստանձնել գնալ Տեր-Ջոր և փրկել կորսված և անհայտ մնացած տարագրյալ հայերին [3]: Այդ ամենը նա կատարել է անգլիական իշխանության պաշտպանությամբ և միջոցներով: Նախքան տարագրությունը Ադանայի բնակչության թիվը, ըստ նամակի, կազմել է 7000, սակայն հրաշքով փրկվածները, որոնք հետ էին վերադարձել քաղաք, 1600 հոգի էին և միության միջոցներով փորձում էին գտնել իրենց առևանգված բարեկամներին: Միությունը խնդրում էր գտնել Հայկուհի և Սիրանույշ 24 և 21 տարեկան քույրերին, որոնց հայրը, մայրը և եղբայրները նահատակվել էին, իսկ նրանք առևանգվել էին արաբների կողմից և այդ պահին գտնվում էին Հալեպից 6 ժամ հեռավորության վրա գտնվող կորած վայրերից մեկում: Նույն նամակում Եղիա Պարտիզպանյանը, որ վերադարձել էր քաղաք, փնտրում էր իր կողակցին՝ տիկին Էլիզային, որը գտնվում էր Տեր-Ջորի Շեդդադիե արաբի մոտ: Էլիզայի հայրը, մայրը և զավակը մահացել էին տարագրության ճանապարհին: Միությունը խնդրում էր մյուս կորուսյալների հետ գտնել և փրկել այս մարդկանց: Նամակը ուղարկվել է Հալեպի միությանը, որտեղից էլ հասել է Հերյանին:

Հայ ազգային միության Հալեպի տեղային վարչության 1919թ. սեպտեմբերի 21-ի նամակից տեղեկանում ենք, որ Նյու Յորքում հրատարակվող «Կոչնակ» շաբաթաթերթի 38-րդ համարում՝ 1232-րդ էջում, հրատարակվել է օրիորդ Մարիա Չոպուրյանի ուղարկած անվանացանկը: Այս ցուցակը խմբավորված է եղել ըստ առևանգվածների գտնվելու վայրերի: Սույն ցուցակում Ս. Փասմաճյանը

կարդացել է իր քրոջ՝ Էլմաս Կարապետյանի անունը և նրան գտնելու խնդրանքով դիմել և՛ Հալեպի ազգային միություն [4] և՛ Տեր-Ջորի հայոց քահանա տեր Եզնիկ Թեքեյանին [4]: Նույնաբովանդակ երկու նամակներն էլ Հերյանի ֆոնդում են, հավանաբար իրարից անկախ՝ ուղարկվել են Հերյանին:

Նամակում Ս. Փաստմաճյանը խիստ մտահոգ է նրանով, որ մի շարք տարագրյալներ չեն ցանկանում վերադառնալ՝ անձանոթներին բեռ չլինելու համար: Այս հարցը մտահոգել է նաև հայ որբախույզներին, որոնք ջանքեր չեն խնայել համոզելու համար հայ կանանց և որբերին: Ստորև հանդիպող նամակներում այս միջադեպը կրկնվում է բազմիցս:

Հալեպի Հայ ազգային միության 22 նոյեմբեր 1919թ. թվակիր նամակից տեղեկանում ենք, որ լեգեոնական Արթին Արուճյանի երկու քույրերից մեկը գտնվել է Մոսուլում, իսկ մյուսը՝ Տեր-Ջորի թուրքերի և քրդերի մոտ [3]: Այս աղջիկներին ազատելու համար Արթին Արուճյանը դիմում էր գրել Այնթափի Հայ ազգային միությանը, որն էլ դիմել էր Հալեպի Հայ ազգային միությանը: Հալեպի Հայ ազգային միությունն էլ փրկության խնդրագրով նամակը ուղարկել էր Հերյանին:

Ի դիմաց Հայ ազգային միության կենտրոնի՝ նամակներից մեկում միությունը շնորհակալություն էր հայտնում Հերյանին անփոխարինելի ծառայությունների համար և խորապես գնահատում նրա ջանքերը, անձնվիրությունը և նվիրական զոհողությունները՝ նշելով, որ պատմությունը ոսկե տառերով պիտի արձանագրի իր արածը [3]:

Արխիվային նամակները վկայում են Հերյանի հանդեպ հոգևորականների տաճած հարգանքի և վստահության մասին: Այս մարդկանց թվին էին պատկանում Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Ջավեն արքեպիսկոպոսը և պատրիարքական փոխանորդը, Եգիպտոսի Թորգոմ եպիսկոպոսը, Տեր-Ջորի հայոց քահանա Եզնիկ Թեքեյանը [5]: Կ.Պոլսի պատրիարքի և փոխանորդի նամակները Հերյանին են հասել հիմնականում Հալեպի Հայ ազգային միության միջոցով:

Ջավեն պատրիարքի նամակներից պարզ է դառնում, որ նա գովաբանում է Հերյանի գործունեությունը հայ որբերին հավաքելու գործում և շնորհակալություն հայտնում բարության և բարեգործության համար՝ հուսալով, որ հետագայում Հերյանը չի մերժի օգնություն ցուցաբերել պատրիարքին՝ խնդրելով՝ անկեղծորեն հավատալ իրեն [6]: Ջավեն պատրիարքի անունից այս նամակը գրել է անգլիացի մայր, քաղաքական ներկայացուցիչ Քարվերը, Տեր-Ջոր: Նամակի բնագիրը անգլերենով է:

17 հոկտեմբեր 1919թ. Հայ ազգային միության՝ Հալեպ քաղաքից ուղարկված նամակում Հայոց պատրիարք Զավեն արքեպիսկոպոսը խնդրում էր գտնել Եղիսաբեթ անունով մի 11 տարեկան աղջկա, որը գտնվում էր արաբի մոտ [4]: Միության հարկ եղած միջոցները չխնայելով՝ Հերյանին հանձնարարվում էր փրկել և ազատել խեղճ աղջկան:

Հերյանը համագործակցել է Մերձավորարևելյան նպաստամատույցի և ՀՅԴ-ի հետ: Հերյանի ֆոնդում պահպանվել է Միջազգետքի նպաստամատույց կոմիտեի նախագահ Ս. Հ. Գույումջյանի՝ Կակաթայի Գալսթոն պարկում անգլերենով արտասանած ճառը: Այն հայ գաղթական որբերի համար օգնության ֆոնդեր ստեղծելու մասին էր: Ճառը ընթերցվել է 1920թ. փետրվարի 13-ին [7]:

«Միջազգետքի Հայ օգնության կոմիտեն վերջին երեք տարիներին աշխատում է երեք կարևոր շրջաններում: Որպեսզի հնարավորինս պարզ բացատրեն մեր կոմիտեի գործունեությունը, ես պարտավոր եմ մեր գործունեությանը առնչվող աշխատանքները բաժանել հետևյալ չորս մասերի՝ Բաղդադում, Մոսուլում, Տեր-Ձորում և Բաքուբայում:

Տեր-Ձորն ու ազատագրումը հումանիշ բառեր են, քանի որ մեր հանձնաժողովի ամենակտիվ անդամներից մեկը՝ պրն. Ռուբեն Հերյանը, չնայած իր տարիքին, կատարել է ազատագրման ամենադժվար և վտանգավոր գործը, որն այնքան կարևոր խնդիր է մեր ազգային գոյության համար: Կարդամ մի հատված նրա վերջին նամակից, որից կհասկանաք, թե նա ինչ մեծ զոհաբերություն է արել և որքան դժվար է փրկել վայրի ցեղերից անապատների թափառական հայ որբերին, ովքեր հանդիսանում են մեր ապագա սերունդները»: Եվ նա մեջ է բերել Հերյանի նամակից մի հատված՝ «Իմ շարժումներն անապատում» խորագրով. «Սկզբից գնացի Գեզիրե և փրկեցի 9 որբերի, իսկ հետո շարժվեցի դեպի Շամաթիե և Խերեյթա և ազատագրեցի 45 տղաների և աղջիկների, այնուհետև գնացի Տերբան և Հավիջա՝ փրկագնելով 42 որբ: Նամակի տեղը Դերգորից չորս օր ճանապարհ է: Դրանից հետո ես շարունակեցի որոնումներս Մեյադինում և Աբուբեմալում և տուն բերեցի ևս 17-ի» [7]:

Հերյանը նաև համագործակցել է ՀՅԴ Կ. Պոլսի պատասխանատու մարմնի հետ [8]: 1919թ. Կ. Պոլսից հայ որբերի ազատման գործի համար ստացված նամակից պարզ է դառնում, որ ՀՅԴ Կ.Պոլսի պատասխանատու մարմինը որբերի ազատումը սկսելու գործը առավելապես համարում է ազգային գործ և անմիջական կերպով

ազգային մարմինների գործունեության մաս: Կ. Պոլսի ՀՅԴ վարչությունը սիրահոժար պարտավորվում էր աջակցել և կուսակցական միջոցներով օժանդակել այդ գործի հաջողությանը:

Հերյանը համագործակցել է նաև Կ. Պոլսի տարագիր հայերի տեղեկատու բյուրոյի հետ: Պահպանված է մեկ նամակ, որը թվագրված է 1919թ. հոկտեմբերի 20-ով: Այս նամակը նրան հասել է Հալեպից [9]: Բովանդակությունը համահունչ է մյուս նամակներին: Երիտասարդ ամուսինը փնտրում է կնոջը և խնդրում է ազատելով նրան ուղարկել Պոլիս՝ ամուսնու և մոր մոտ: Առավել ուշագրավ է նամակի հետգրությունը, որից պարզ է դառնում, որ Կ. Պոլսի տարագիր հայերի տեղեկատու բյուրոն անհայտ փնտրվողների վերջին ցուցակը առաքել է Հալեպ՝ Հերյանի մատնանշած հասցեով:

Այս ամբողջ նամակագրությունը վկայում է այն մասին, որ Հերյանը հաճախ ընդունվում էր իբրև մի գորեղ ուժ, որը կարող էր իրար կորցրած բարեկամներին, ազգականներին, քույրերին և եղբայրներին գտնել և միավորել: Բնականաբար ցեղասպանության պայմաններում միշտ չէ, որ դա նրան հաջողվում էր: Սակայն նրան ուղղված նամակները և գրությունները ներշնչված են անսահման վստահությամբ և հույսով «Որբերու հայրիկի» հանդեպ:

Հալեպ, 21 մարտ, 1920թ. թվակիր նամակից տեղեկանում ենք, որ նամակի հեղինակը Հերյանի անձնվեր գործունեությունը գնահատում է որպես հայ ազգի պատմության մեջ փայլուն էջ՝ Հերյանին կոչելով **«Լուսագույն անձնավորություն անապատի տարագրյալների համար, ումով կարելի է կատարյալ գոհացում գտնել»** [10]: Հերյանի ֆոնդում առանձնահատուկ ուշադրության են արժանի նրա և Հայկական լեգեոնի լեգեոնականների միջև եղած նամակագրական կապը, լեգեոնականների հետ լուսանկարները՝ կապրալ Ջիմ Չանկալյան, որը Սսի մեջ ինքնապաշտպանություն վարեց, Ջորջ Թագագճյան [11], Վահե Սահաթճյան, լեգեոնի հոգևոր հովիվ Վաղարշակ՝ վարդ. Արշակունիի հետ: Հերյանի պատմական կերպարը ամբողջանում է, երբ նրան գնահատում ենք նաև որպես լեգեոնական՝ կապրալ Ռուբեն Հերյան:

«Արև» լրագրում Լ. Աճեմյանի հրատարակած հոդվածը արժևորում է լեգեոնականներին: Հոդվածում Աճեմյանը գնահատում է Հերյանին՝ նրան բնորոշելով ծերունու հանդարտություն ունեցող երիտասարդի, որի գործունեությունը սահմուկեցնում է ընթերցողին: Հերյանը ներկայանում է որպես կամավորական գործիչ ու «կամավորի դերին մեջ, Նեղոսի ափերի վրա, ուր նա եկել էր միանալու Նյու Յորքից ճամբա ելած

արհակա՛ն տղաների»։ Աճե՛մյանի գնահատմամբ՝ Հերյանը Սիրիայում լինե՛ր, թե Կիլիկիայում, դադար չե՛ր ունենալու սխրալի բոլորանվիրումի՛ մեջ։ Արարան հայի ռազմունակության մեկ փառապանծ դրվագ էր՝ արժանի երկյուղած հարգանքի ու պաշտամունքի։ Աճե՛մյանը գրում է. «Ահա հետն եմ անմահ Հերեանի, Ատանայի կամ Տ. Եօլի մեջ։ Ահա քաղաքականությունը բարեկամ-թշնամիներուն և թշնամի բարեկամներուն, որոնք սկսած էին խարույկի տալ մեր բոլոր հույսերը։ Ու երբ ամեն ինչ յայտնի եղավ և բարեկամն էլ դարձավ թշնամի, Հերեան «ելից մեկ հնարք կայ, կսեր ինձի Տ. Եօլի մեջ։ Երթալ ճիհան ու մնացած կամավորներուն հետ լեռը բարձրանալ»։ Յետոյ Թագագճեանը, յետոյ Եկավեանը, Գասպարը, Յեսուն, Մեխակը, Չավուշը, որ 1920-ին երբ Տ. Եօլի մեջ պաշարված էինք, իր հայրենիքեն նավակով եկավ գենք խնդրելու և ստացավ 130 հաս։ Բայց որ մեկը յիշեմ այս շքեղ տղաներուն, գաղափարի ընկերներուն։ Ինչպես յիշեմ մանավանդ անունները այդ նահատակներուն։ Ձեր յիշատակը օրհնեա՛լ ըլլայ, հերո՛ս տղաք» [11]։

Հերյանի ֆոնդում պահպանված նամակներից պարզվում է, որ լեգեոնականները նույնպես փորձել են ստրկությունից ազատել իրենց ազգականուհիներին։ Կանգ առնենք Չարեհ և Մարիամ Փափագյանների նամակների վրա [12]։ Շուրջ մեկ տասնյակ նամակներում ամփոփված է մի ընտանիքի ողբերգություն, որն ընդհանրացնելով վերաճում է համազգայինի։ Նամակների բովանդակությունից պարզ է դառնում, որ արաբների կողմից առևանգված Մարիամը Հերյանի միջոցով կապ է պահպանել զինվորական ծառայության մեջ գտնվող եղբոր հետ։ Այնթափից ուղարկված 1919թ. նոյեմբերի 6 թվակիր նամակում Չարեհը գրում է, որ մի ամիս առաջ Հերյանին հայտնել է Տեր-Չորի մեջ արաբների մոտ եղած քրոջ մասին և կրկին խնդրում է փրկել քրոջը և տանել Հալեպ։ Նա խնդրում է փրկության լուրը հայտնել իրեն, քանի որ այս մտածմունքը վնասում է իր զինվորական ծառայությանը։ Գաթմայից 1919թ. դեկտեմբերի 28-ին ուղարկված նամակից պարզ է դառնում, որ Մարիամ Փափագյանը 5-6 ամիս առաջ Թ. Նիկողոսյանի և Ս. Թուֆանյանի միջոցով նամակներ է ուղարկել եղբորը։

Գաթմայից 22-րդ Հայկական լեգեոնի 9-րդ գումարտակի զինվոր Չարեհ Փափագյանի առաքած հաջորդ նամակը ուղղված է Հերյանին և թվագրված է 1920թ. հունվարի 4-ով [12]։ Նամակի բովանդակությունից հասկանում ենք, որ Ս. Թուֆանյանը փորձել է աղջկան ազատել, սակայն աղջկը մերժել է՝ մեկնաբանելով, որ եղբայրը զինվոր է և նա Հալեպ գալուց հետո խնամակալ չի ունենա և կմնա որբ։

Այդ նամակներից մեկը անթվակիր է: Հավանաբար գրված է 1919թ. վերջ-1920թ. սկզբին [12]: Նամակի բովանդակությունից տեղեկանում ենք, որ Մ. Փափազյանը չորս տարի է՝ Տեր-Ջորում է, արաբների մեջ մենակ, նա բարևներ է ուղարկում եղբորը և երագում է տեսնել նրա աչքերը: Մարիամը նաև գրում է Հալեպի մեջ մահացած քույրիկների և Տեր-Ջորի մեջ մահացած մայրիկի մասին (հավանաբար խոսքը իր մոր և քույրերի մասին է):

Եզրակացություն: Այսպիսով, անհրաժեշտ է արժևորել Ռուբեն Հերյանի գործունեությունը Հայոց ցեղասպանության տարիներին, նրա անձնուրաց նվիրումը հայ ժողովրդին և որբահավաքի գործունեությանը: Իր գործունեության ընթացքում Ռուբեն Հերյանը սերտորեն համագործակցել է Հայ ազգային միության հետ, ինչպես նաև այլ կազմակերպությունների և բարեգործական միությունների (Մերձավորարևելյան նպաստամատույցի, Միջազգետքի հայ օգնության կոմիտեի, Կ.Պոլսի պատրիարքարանի, ՀՅԴ-ի, ՌԱԿ-ի) և անհատների (օրինակ՝ լեգեոնականներ Ջիմ Չանկալյան, Ջորջ Թագազճյան) հետ: Հայ ազգային միությունը, նաև մյուս կազմակերպությունները գնահատում և արժևորում են Հերյանին իր կատարած աշխատանքի, անփոխարինելի ծառայությունների համար, գնահատում նրա ջանքերը, անձնվիրությունը և նվիրական զոհողությունները: Հերյանը հաճախ ընդունվում էր իբրև մի գորեղ ուժ, որը կարող էր իրար կորցրած բարեկամներին, ազգականներին, քույրերին և եղբայրներին գտնել և միավորել: Նա այն անձնավորություններից է, ում աշխատանքը վերադարձրեց հայկական միջավայր հազարավոր որբերի և մեծապես նպաստեց Մեծ եղեռնից հետո հայ ժողովրդի վերածննդին:

**СОТРУДНИЧЕСТВО РУБЕНА ГЕРЯНА С АРМЯНСКИМ
НАЦИОНАЛЬНЫМ ОБЩЕСТВОМ И С ДРУГИМИ
БЛАГОТВОРИТЕЛЬНЫМИ СОЮЗАМИ**

Оганнисян Г. А.

В статье представлена самоотверженная преданность Рубена Геряна своей работе - поискам сирот, женщин и девушек во время Армянского геноцида, нахождению их и определению в сиротские приюты. А также его сотрудничество с Армянским национальным обществом, с Общесвом помощи армян в Междуречье и другими благотворительными фондами. Важно отметить близкую связь Геряна с легионерами Армянского легиона

– Джим Чанкалян, Джордж Тагагчян и другие, так как сам Герян был членом Армянского легиона и занимал должность капрала.

Ключевые слова: Геноцид армян, Рубен Герян, Армянский национальный союз, Армянский комитет помощи Месопотамии, Ближневосточный рельеф, сиротская работа, детские дома.

COOPERATION OF RUBEN HERYANS WITH THE ARMENIAN NATIONAL SOCIETY AND WITH OTHER CHARITABLE UNIONS

Hovhannisyan H. A.

The article presents Ruben Heryan's selfless dedication to his work - searching and finding the orphans, women and girls during the Armenian Genocide and placing them in orphanages as well as Heryan's cooperation with the Armenian National Society, with the Commonwealth of Aid to Armenians in Mesopotamia and other charitable foundations. It is important to note the close connection of Heryan with the legionaries of the Armenian Legion - Jim Chankalyan, George Tagagchyan and others, since Heryan himself was a member of the Armenian Legion and held the post of corporal.

Keywords: the Armenian Genocide, Ruben Heryan, Armenian National Union, Mesopotamian Armenian Relief Committee, Near East Relief, orphan gathering work, orphanages.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մարգարյան Ն., Միջազգային անապատների հայ որբախույզները (1918-1923): ԵՊՀ Հայագիտության հարցեր: 1(13): Եր.: ԵՊՀ հրատ.: 2018: Էջ 39-57:
2. Aleksanyan A., Rescuing Armenian Women and Children after the Genocide: The Story of Ruben Heryan, <https://armenianweekly.com/2016/05/31/ruben-heryan/> (11.12.2020)
3. ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 13, թ. 1, 2, 4:
4. ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 15, թ. 2, 3, 4, 5-5 շրջ.:
5. ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 20, թ. 3:
6. ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 17, թ. 2, 3, 4:
7. ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 51, թ. 9:
8. ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 26, թ. 4:
9. ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 31, թ. 1:

10. ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 3, թ. 12:
11. ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 46, թ. 1-1 շրջ., թ. 2:
12. ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 30, թ. 3-4, 8, 9:

Տեղեկություններ հեղինակի մասին
Հովհաննիսյան Հ. Ա.- մագիստրոս
Երևանի պետական համալսարան
Էլ. փոստ elline.hovhannisyanyan@mail.ru

Տրվել է խմբագրություն՝ 11.09.2021
Գրախոսվել է՝ 03.12.2021